ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԹԻՎ 156

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Photo | UN Women/Photographer's name

ԱՄԿ Ընտանեկան պարտականություններ ունեցողների մասին կոնվենցիա

- ԱՄԿ Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին թիվ 156 Կենվենեցիան ընդունվել է 1981թ. և ուժի մեջ է մտել 1983թ.-ից
- Մինչ այժմ Կոնվենցիան վավերացրել են ԱՄԿ անդամ 45 երկրներ
- Կոնվենցիան և դրան կից թիվ R165 հանձնարարականը ներկայացնում են ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների համար տնտեսական գործունեությանը նախապատրաստվելու, աշխատելու համար հավասար հնարավորությունների ստեղծման նվազագույն չափորոշիչները

ԱՄԿ Ընտանեկան պարտականություններ ունեցողների մասին կոնվենցիա

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամը և Մարդու իրավունքների հետազոտական կենտրոն (ՄԻՀԿ) ՀԿ-ն ՄԱԿ-Կանայք կազմակերպության հետ համատեղ իրականացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Ընտանեկան պարտականություններ ունեցողների մասին (թիվ 156) կոնվենցիայի քաղաքականության բարելավման ազդեցության գնահատումը Հայաստանում:

Ուսումնասիրությունն իրականացվել է ՄԱԿ-Կանայք կազմակերպության «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» (WEESC) ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Ավստրիական զարգացման համագործակցության (ADC) կողմից

Խնդրի սահմանում և ելակետային սցենարի ներկայացում

- Թեև բոլոր տղամարդկանց և կանանց տնտեսական գործունեությամբ զբաղվելու հավասար հնարավորություններն ապահովող երաշխիքները Հայաստանում օրենսդրորեն ամրագրված են, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացումը հանդիպում է մի շարք մարտահրավերների առկա խտրական պրակտիկայի և ընտանիքում գենդերային տարբերակված դերերի պատճառով:
- Տնտեսական/աշխատանքային գործունեության իրականացման համար բարենպաստ միջավայր ապահովող ծառայությունները սահմանափակ են կամ բացակայում են, հատկապես խնդրահարույց է որակյալ և մատչելի խնամքի ծառայությունների հասանելիությունը:
- Աշխատանքի ընդունելիս ընտանեկան կարգավիճակի/պարտականությունների հիման վրա խտրականությունը սահմանափակում է աշխատուժի հավասար մասնակցության հնարավորությունները:
- Իրավունքների և կանոնակարգերի, ինչպես նաև կայուն սոցիալական նորմերի մասին տեղեկացվածության անբավարար մակարդակը գենդերային զգալի բացեր է ստեղծում աշխատաշուկայում կանանց ներգրավվածության հավասար հնարավորությունների առումով:

Խնդրի սահմանում և ելակետային սցենարի ներկայացում

- ՀՀ օրենսդրությունը չի սահմանում ընտանեկան պարտականությունները և որպես առանձին կատեգորիա չի ճանաչում ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողներին:
- Գործող օրենսդրությունը Կոնվենցիայի պահանջներին ներդաշնակեցնելու նպատակով հարկավոր է փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում՝ Կոնվենցիայի լայն շրջանակին համապատասխան «անմիջական ընտանիքի անդամներ» և «ընտանեկան պարտականություններ» տերմինների հստակ սահմանում տալու, երեխայի խնամքի համար աշխատանքային օրենսգրքով սահմանված երաշխիքները ընտանիքի այլ անդամների խնամքի վրա տարածելու առումով:
- Այդուհանդերձ, առկա խնդիրները քննարկելիս գնահատում իրականացնող թիմը որոշում է կայացրել չանդրադառնալ խնդրի իրավական կարգավորման հարցերին, փոխարենը կարևոր է համարել կենտրոնանալ քաղաքականության և սոցիալ-տնտեսական հարթությունների վրա՝ քաղաքականության բարելավման խնդիր:

Էլեկտրային իրավիճակ

- ***Աշխատանքի շուկա.***
  - Աշխատուժի մասնակցության մակարդակը 2019 թվականին կազմել է 59.9% (տղամարդկանց համար՝ 71.7 %, կանանց համար 49.6 %)
  - Աշխատանքային ռեսուրսների 37%-ը կամ հինգից մոտ երկուսը 2019թ. եղել է տնտեսապես ոչ ակտիվ; տնտեսապես ակտիվ բնակչության 18.6 %-ը եղել է գործազուրկ
  - Աշխատուժից դուրս բնակչության մասնաբաժինը կազմել է 40.1%; աշխատուժից դուրս կանանց մասնաբաժինը կազմել է 50.4%՝ տղամարդկանց 28.3%-ի դիմաց:

Ընտանիք անդամի խնամքի պատճառով աշխատուժից դուրս բնակչության մասնաբաժինը





Սովորաբար կես-դրույք/ոչ լրիվ աշխատանքային օր աշխատողների մասնաբաժնը

Միջամտության սցենարներ

Ստատուս քվո սցենար

Այս սցենարի համաձայն գործող օրենսդրությունը թողնվում է ներկա տարբերակում; հղի և կրծքով կերակրող կանայք չեն օգտվում իրենց առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման արդյունավետ պաշտպանությունից:

Քաղաքականության 1-ին տարբերակ (Նպաստավոր միջավայրի ստեղծում/բարելավում)

Երեխաների որակյալ խնամքի համակարգերի և ծրագրերի հասանելիության ուժեղացում՝ ընտանեկան պարտականություններ ունեցող բոլոր աշխատողների և հատկապես կանանց խնամքի բեռը թեթևացնելու համար:

Քաղաքականության 2-րդ տարբերակ (Իրազեկվածության բարձրացում, խտրական սոցիալական նորմերի փոփոխություն)

Առաջարկվել է երկրորդային տվյալների և որակական (FGD և KII) վերլուծության արդյունքների հիման վրա: Նախատեսում է երկարաժամկետ և համակարգային իրազեկման բարձրացում և վարքագծի փոփոխության քարոզարշավներ և ռազմավարություններ:

Սցենարների ազդեցության վերլուծություն

- **Քաղաքականության 1-ին տարբերակ (Նպաստավոր միջավայրի ստեղծում/բարելավում). ակնկալվում է, որ այս սցենարի իրականացման արդյունքում.**
  - կաճի աշխատուժի մասնակցության մակարդակն ու ընտանեկան պարտականություններ ունեցող տղամարդկանց և կանանց արտադրողականությունը
  - կես դրույքով աշխատող կանանց առնվազն 14%-ը և աշխատուժից դուրս գտնվող կանանց 12 %-ը, ովքեր հայտնել են համապատասխան խնամքի ծառայությունների բացակայության կամ բարձր արժեքի մասին, հնարավորություն կունենան բարելավելու իրենց երկարաժամկետ կարիերան և եկամուտ ստանալու/վաստակելու հեռանկարները
  - կենսաթոշակային իրավունքի ձևավորում, աղքատության հաղթահարում
  - անուղղակի՝ վաղ մանկության զարգացման հիմնախնդրի բարելավում

Թեև երեխաների խնամքի համայնքային ծառայությունների և/կամ ծրագրերի մշակումը կամ խթանումը հնարավորություն կտա ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողներին օգտվել իրենց իրավունքից, այնուամենայնիվ, առանց օրենսդրության կիրառման ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման, առաջարկվող քաղաքականության տարբերակի ազդեցությունն ամբողջությամբ չի կարող իրացվել:
Զբաղվածության ակտիվ ծրագրերի սահմանափակությունը ևս խնդիր է:

Սցենարների ազդեցության վերլուծություն

Պետական բյուջեի ծախսեր.

- Ակնկալվում է պետական եկամուտների աճ (կհավաքագրվի ավելի շատ եկամտահարկ): Հարկային եկամուտների աճը պայմանավորված կլինի աշխատաշուկա նոր մուտք գործող անձանց, ինչպես նաև կես դրույքից լրիվ դրույքով աշխատանքի անցողների թվով:
- Նախադպրոցական հաստատությունների կամ երեխաների խնամքի ծառայություններ մատուցող ծրագրերի ընդլայնումը ենթադրում է պետական ծախսերի ավելացում:

Հաշվարկները պարզեցնելու նպատակով արվել են հետևյալ ենթադրությունները

- Մակրո և բիզնես միջավայրը, ինչպես նաև իրավական դաշտը նպաստում են ֆորմալ և ներառական աշխատատեղերի ստեղծմանը
- Կես դրույքից լրիվ դրույքի անցող բոլոր աշխատողները տնտեսության ֆորմալ հատվածում են
- Եկամտային հարկը և պետության կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային հատկացումների համաֆինանսավորումը հաշվարկված է միջին աշխատավարձի 50 տոկոսի համար, ենթադրելով, որ մնացած 50 տոկոսն արդեն վճարվում է
- Քանի որ քաղաքականության 2-րդ տարբերակի ազդեցության անորոշությունները մեծ են, հաշվարկներն արվել են՝ ենթադրելով, որ առաջարկվող երկու սցենարները միաժամանակ են իրականացվում
- Զբաղվածության ակտիվ ծրագրերը կբարելավվեն թե դիզայնի և թե ընդգրկվածության առումով
- Քանի որ սոցիալական ենթակառուցվածքների զարգացումն ու բարելավումը, ներառյալ մանկապարտեզների վերանորոգումն ու կառուցումը, ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրի մաս է, այդ ծախսերը չեն համարվել լրացուցիչ և չեն ներառվել հաշվարկներում:

Սցենարների ազդեցության վերլուծություն

Քաղաքականության տարբերակների հետ կապված պետական ծախսերի ամփոփ աղյուսակ

Ծախսեր	Քաղաքականության 1-ին տարբերակ (Նպաստավոր միջավայրի ստեղծում/բարելավում)	Քաղաքականության 2-րդ տարբերակ (Իրազեկվածության բարձրացում, խտրական սոցիալական նորմերի փոփոխություն)	Քաղաքականության 1-ին և 2-րդ տարբերակների համադրություն
Դայակի ծրագրի բարելավում և ընդլայնում	✓	-	✓
Հմտությունների/կարողությունների նպատակային զարգացում/ուսուցում այն տղամարդկանց և կանանց համար, ովքեր վաղուց հեռացել են աշխատաշուկայից (երեխաների խնամքի պարտականությունների պատճառով)	✓	-	✓
Պարտադիր կուտակային կենսաթոշակային հատկացումների համաֆինանսավորում (ենթադրվել է, որ բոլորը պարտավոր են միանալ կուտակային պարտադիր բաղադրիչին)	✓	✓	✓
Հանրային իրազեկում և վարքագիր փոփոխություն	-	✓	✓
Մշտադիտարկում և համակարգում	✓	-	✓

Սցենարների ազդեցության վերլուծություն

Օգուտների և ծախսերի ամփոփում, մլրդ. ՀՀ դրամ

	Քաղաքականու-թյան Տարբերակ 1 (միայն նպաստավոր միջավայրի բարելավում)	Քաղաքականու-թյան Տարբերակ 2 (միայն հանրային իրազեկման և վարքագծի փոփոխության արշավ)	Քաղաքակա-նության 1 և 2 տարբերակներ ի համադրություն
Օգուտներ	49,0	19,6	98,0
Ծախսեր	16,1	25,9	51,3
ՁՆԱ (Օգուտներ – Ծախսեր)	32,9	-6,3	46,7

Տարբերակ 2-ի դեպքում քաղաքականության իրականացման արժեքը 6,3 միլիարդ ՀՀ դրամով գերազանցում է ստացված օգուտներիը՝ կասկածի տակ դնելով այս սցենարի կենսունակությունը:

Քաղաքականության Տարբերակ 1-ի և քաղաքականության 1-ին և 2-րդ տարբերակների միաժամանակյա իրականացման դեպքում օգուտները էապես գերազանցում են քաղաքականության իրականացման ծախսերը:

Օգուտ-ծախս տարբերության առումով առավել դրական արդյունքը ապահովվում է քաղաքականության երկու տարբերակները համադրելիս: